Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2ШЧ

296, 297, 298
299, 300, 301

302, 303, 304,
~~305, 306, 307,~~
308, 309, 310, 311

2000

ՀԱՍԱՐԱԿԱՑ

ԹԱՆԳԱՐԸՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ՀԱՏՈՐ Բ.

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ

Géologie.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԻԵԱՆ

1858

12

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Լաս
297
4

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԹԱՆԳԱՐԱՆ
ՀԱՏՈՐ Բ.

ԵՐԿՐԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ

ՉՄԻՒՌՆԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԼԱՆ
1858

28-297

297-2003

ԱՐԻՈՑ ԸՆԹԵՐՑՈՂ

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԹԱՆԳԱՐԱՆ մակագրով տետրակներ այսուհետև պիտի սկսին տպուիլ ու հրատարակուիլ հետզհետէ։ Առնց մէջ պիտի խօսուի բոլոր գլխաւոր գիտութեանց մի մասն նիւթն վրայ։

Ընթերցողները շատ ադէկ կ'ըլնեն եթէ Երիտասարդութեան հատորը Ազգաբանութեան հատորին հետ միատեղ կարդան, քանի որուամ շատ կապակցութիւններ ունին իրարու հետ այս գիտութիւնները։

Գրիգոր Խոսրովեան։

17951

7333·57

ԿՈՒՍԱՍԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐՔԱՅԻՆ ԳԻՒՂԱՍՏԱՆԻ ԳԱՏԱՅԻՆԻՑԻ

ՄԵԿ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՎՐԱՑ

ԻՆՉՊԷՍ որ ջուրը եթէ սրսկենք կլոր ձևով գնտակներ կըլլան՝ նմանապէս երկիրս ալ 'ի սկզբանէ բորբոքեալ հալած որով և հեղուկ ըլլալովն եղեր է որ կլոր գունտի ձև առեր է (Տես հատոր Գ. Հատարակաց Թանգարանին)։

Ու այս կլոր ձևով երբ սկսաւ տիեզերքիս մէջ արևուն բոլորտիքը շրջան ընել՝ սկսաւ իր մակերևոյթին ջերմութիւնը ցրուիլ որով և վրայի երեսը պաղելով՝ ուրեցած կըլլոր ձևովը պնդանալ։ Երկրիս այս վիճակին համար էր որ Աստուածաշունչը "Ու երկիրս էր աներևոյթ և անպատրաստ և խաւարը 'ի վերայ անդնդոց և հոգի Աստուծոյ շրջէր 'ի վերայ ջուրց" կ'ըսէ։ Որչափ որ երկիրս պնդանալով վերան բարակ կեղև մը ունէր՝ տակաւին այնչափ չէր ջերմութեան նուազումը որ վերան անասուն կամ բոյս գտնուիլ կարե-

նային, հապա երկիրս ինչպէս և առա-
ջուց ալ թանձր մթնոլորտով մը պատած
էր, ջերմութեամբ հալած նաւթին, ջու-
րին, սնդկին, և այլոց շոգիներովը։
Մինչև այս ժամանակս երկրիս մակերևոյ-
թը ոչ խորութիւն ունէր և ոչ բաձրու-
թիւն, այլ ամեն կողմը հարթ հաւասար,
սակայն երբ այս միջոցիս երկրիս մակե-
րևոյթը սկսաւ երթալով պաղել և թանձ-
բանալ՝ մթնոլորտն ալ երկրիս հետ ցրը-
տացաւ, որով և օդուն մէջ դտնուած
շոգեղէն նիւթերը խտացան և վար իջան,
ասոնց մէջ ջուրը շատ ըլլալով անձրե-
ւանման վար իջնալով երկրիս վրայի ծո-
վերը կազմեց. մթնոլորտը ասանկ զտուե-
լով առջի հեղուն արևուն ճառագայ-
թերը կրցան թափանցել անոր և երկիրս
լուսաւորեցին և եղաւ կանոնաւոր օր,
ասոր համար է որ Աստուածաշունչը "Լե-
եղիւ լոյս" կ'ըսէ։

Երկրիս մակերևոյթը այս ժամանակնե-
րուս խիստ հաստացած ըլլալով՝ ներքին ե-
ղած հուրը չի կրցաւ արտաշնչութիւն
ընել և նեղը մնալով ջերմութեամբ այն-
չափ անգայտացաւ որ՝ սկսաւ բռնի ընդ-
արձակիլ և տեղ տեղ կարծրացած կե-

ղևը վեր հռելով և հրաբուխեր բանա-
լով դուրս ելել. այս վեր հռելով յա-
ռաջ եկան ցամաքն ու լեռները և որուն
"Յողովեցան ջուրքն որ 'ի ներքոյ երկնից
'ի ժողով մի և երևեցաւ ցամաքն" կ'ը-
սէ Սուրբ գիրքը։ Ինաաեն աշխարհս
սկսաւ նախ մեծամեծ բոյսերով ծած-
կուիլ, որուն համար "Լու եհան երկիր
բանջար խոտոյ" կ'ըսէ Աստուածաշունչը
և անասուններով լեցուիլ, և որուն ալ
"Լու արար Աստուած զեռունս շնչոյ
կենդանեաց և թռչունս թևաւորս, կետս
մեծամեծս և զգազանս" կ'ըսէ նոյն գիր-
քը։ Այս դարուս մէջ շատ հեղ վերա-
տին հրաբուխեր ելլելով՝ կղզիներ և ցա-
մաքներ ձևացան, որոնցմով ծովուն տա-
կը եղած խեցեմորթները վեր ելան, ո-
րոնք մինչև հիմա քարացած կը գտնենք,
բոյսերն ալ հանքերով և ջրերով ծած-
կուեցան և քարացան, օդն ալ ինչպէս
վերը ըսինք երկրիս ջերմութեանը հետ
փոփոխութիւն կրելով՝ շատ անասուններ
մեռան. Մարդս ալ այս միջոցիս մէջ ըս-
տեղծուեցաւ, ինչպէս և Աստուածաշուն-
չին մէջ կը տեսնենք "Լու արար Աստու-
ած մարդն".

Երկրաբաններուն գլխաւոր դրութիւն է որ Մովսիսի հինգ օր ըսածը (դեռ մարդ չստեղծուած) պէտք չէ որ հիմակուան օրերուն պէս ըմբռնենք, այլ 4—5 երկայն ժամանակներու միջոցներ (դարեր)։

Երիրայեցերէն Ասուածաշնչին իսմ օր բառն ալ միմիայն օր (24 ժամ) չի նշանակեր, հապա դար և միջոց ժամանակի։

Այս բանս կըհաստատեն երկրիս ներքևը եղած շարք շարք հողերու մէջ գտնուած այլ և այլ տեսակ կենդանեաց և բուսոց մնացորդները, որոնք իրարու չեն նըմանիր, ըսելէ թէ զանազան ցեղ անասուններ և բոյսեր ստեղծուեր են, ապրեր են երկրիս վրայ, և ետքը ցեղերնին հատեր ջնջուեր ու անոնց տեղը ուրիշներ յաջորդեր են։

Երկրաբանները երկրիս ջերմութիւնն ալ փաստ կը բերեն ասոր։ Վասնզի ինչպէս որ երկրագունտս առաջ բորբոքած և բոլորովին հալած նիւթներ՝ անկարելի էր որ տունկ բուսներ և կենդանիք բնակէին, ուրեմն երկրիս մինչև պաղիլը և մակերևութին պնդանալը, և որով ինչպէս վերը ըսինք՝ վրան զանազան կենդանիներ և բոյսեր բնակիլը, ջնջուիլը, ու

նորերէն յաջորդուիլը, շատ ատենի կա-
ըստ բան է։

Ը. ասանկ ըլլալով, երկրաբանները
հինգ երկայն ժամանակներու դարերու կը
բաժնեն Մովսիսի 6 օրը և անկէ առաջ
"Լոյս երկիրս էր աներևոյթ և անպատ-
րաստ" ևայլն, ևայլն ըսածը՝ անթիւ
դարերու ասպարէզ մը։ Ի վերայ այսր
ամենայնի վերոտին Մովսիսական ժամա-
նակագրութեան դէմ չելլելով, վասն զի
Մովսէս մարդուս ստեղծմանէն կըսկսի
հաշուել։

Այլևայլ ազգեր զանազան կերպիւ կը
խօսին աշխարհիս հնութեանը վրայ, զոր
իբր տեղեկութիւն մը դնենք հոս։

Ըստ Քրիստոսէ առաջ

ըստ Պրահմանեան փիլիսոփայից՝
4,000,000 տարի տևեց կ'ըսեն Պրահման-
եան տէրութիւնը։

ըստ Ասքոնացւոց՝
2,362,000 տարի տևեց կ'ըսեն թէ — սի-
պոյի — յին Ասքոնացւոց տէրութիւնը։

ըստ Չինաց՝
2,276,479ին սկսաւ կըսեն Չինաց Վի ա-
նունով ժամանակը, Ֆոհի — ոնանք անուամբ
առաջին մարդէ մը (իրենց Ադամ)։

ըստ Բաղդէացւոց՝
720,000 ին սկսաւ կըսեն Բաղդէական դա-
ՐԸ։
ըստ Բաբելացւոց։
470,000 ին սկսաւ կըսեն Բաբելական դա-
ՐԸ։
ըստ Մոգաց։
100,000 ին սկսաւ կ՚ըսեն հին Պարսից այ-
սինքն Մոկաց դարը՝ Մակապա անունով
առաջին Թագաւորէ մը։
ըստ Փիւնիկեցւոց՝
30,000 ին սկսաւ կ՚ըսեն Փիւնիկեցւոց
դարը։

և այլն, և այլն, և այլն։

Հիմա այլ և այլ տեղուանք երկրիս ներսերը այնպիսի կենդանեաց և բուսոց մնացորդք կը գտնուին, որ այն տեղի կլիմային մէջ չեն կրնար ապրիլ, այսինքն այն տեղի օդին բարեխառնութիւնը իրենց ապրելուն չի դար. և ինչպէս ելեր է որ իրենք ուրիշ կլիմայի բառեխառնութեան տակ եղող կենդանիներ ըլլալով՝ ասանկ տարբեր կլիմայի մէջ գտնուեր են. եթէ հարցուի պատասխանը երկրաբանութեան կիյնայ և այսպէս կը մեկնուի։ Ըստ որում երկիրս կլոր կը-

գակէ հալած գունտ մ՝ էր ի սկզբանէ աշխարհիս նաւթը, ծծումբը, զինկը, կապարը, ջուրը, և այլն և այլն նիւթերը երկրիս ջերմութեամբը շոգի դարձած՝ թանձր մթնոլորտ մը կը կազմէին երկրիս բոլորտիքը, այլ և այլ կողմերուն ունեցած բարեխառնութիւնը հիմակուան եղաներ-էն շատ տարբեր էր, որով և ամեն ա-նասունները իրենց եղած տեղին օդին հա-մեմատ կեանք ունէին։ Բայց երկրագնտին պաղելով մթնոլորտին մէջ շոգիացեալ նիւ-թերը խտացան վար իջան, և մթնոլորտը մաքրուեցաւ, և երկրիս ան ժամանակը ունեցած զանազան բարեխառնութիւնը խախտեցաւ, և անասունները մեռան ի-րենց հարկաւոր եղած ու անով մեծցած՝ սնունդնին կորսնցնելով. և հիմա ասոնց ոսկրներն են որ տարբեր կլիմայի մէջ կը գտնուին։

Շատ հեղձուցիչ երեսէն շատ բարձր լեռներուն վրայ զանազան ոստրէներու կեղևներ, ձկանց ոսկրներու քարացմունք-ներ, ժայռերու վրայ նաւկապելու օղակ-ներ և քարերուն վրայ ալեաց զարնուած-

քովը յառաջ եկած մաշուածքներ տեսնելով՝ կ'ապշի. մտածելով թէ ինչպէս այս ծովային նիւթերը և գործողութիւնները ասանկ լեռներու վրայ կը գտնուին. բայց քննելով կը գտնէ որ բոլոր ասոնք երկրիս կեդրոնական ջերմութեան աղդուութիւններէն յառաջ կը գան։

Վասնզի երկրիս ներքին հուրը ուղելով արտաշնչութիւն տուներ, կրսկսի իր վրայ կեղևին դէմ դնելով բռնի ջերմութիւն անգայտանալ, և հրաբուխներ բանալով և երկրաշարժեր գործելով, վրայի ջորցած հողերը վեր կը հռէ, և ան տեղի երկիրը իր հասարակ վիճակէն աւելի կը բարձրացնէ։ Բայց շատ անգամ անգայտացումը տկար ըլլալով, մի միայն երկրաշարժերով յաճախ ալ քիչ քիչ անդդալապես կը բարձրացնէ վրայի կեղևը։ Այս կերպիւ թէ հասարակ երկիր և թէ ծովեղներ ալ բարձրանալով՝ հոնտեղի եղած ոստրէները, քարերը և բոլոր բաները ծովեղերին հետ միատեղ լեռներու բարձրութեան կելլեն. և մենք ալ զանոնք հոն տեսնելով կ'ապշինք։

Ինդիր կայ, թէ արդեօք մինչև հիմա ասնկա երկիրներ, լեռներ կը բարձրանան

թէ ոչ, ասոր մէկ պատասխան ուզելու համար կան տակաւին ասանկ փոփոխութիւններ կըսեն. վասնզի որչափ որ երկրիս ներքին ջերմութիւնը իւր բարեխառնութիւնը գտած է և վրայի կեղևը հասցած ըլլալով, մեծամեծ փոփոխութիւններ չէ նըլլար, սակայն կամաց կամաց անդադարաբար եղած բարձրացումներ խիստ շատ կան։ Հին պատմիչները կըսեն որ Հռոդոս, և Դեղոս, Թիոս և Հերայ կըղզիները առաջուց չկան եղեր և ետքը ելեր ու բարձրացեր են։

Երկրիս ներքին կրակին ասանկ արտաշնչութիւն առնել ուզելովը հողը վեր բարձրացնելուն շատ օրինակներ կան, որոնց մէկ քանին հոս գնենք։

Թիլեի մէջ 30 փարսախ ընդարձակութեամբ ծովեզերք մը 10 ոտք վեր բարձրացաւ՝ գետնաշարժէ մը ետքը։ 1819 ին Լիսոս գետին բերնին մօտ 60 մղոն երկայնութեամբ և 16 մղոն լայնութեամբ երկիր մը 10 ոտք վեր բարձրացաւ։ 1831 ին աւ Սիկիլիայ քով բարձրացաւ Ներիտայ կղզին։ Արդի երկար քննութիւններով հաստատուեցաւ որ Դաղղիոյ արևմտեան ծովեզերը բարձրանալու վրայ է։ Նմանա-

պէս Շուէտի հարաւային կողմը։ Պաշ-թիկ ծովուն համար 100 տարիէն ձոր մը կը դառնայ կ'ըսեն, վասնզի աս ծովուն յատակը տարին կէս ոտնաչափ բարձրանալու վրայ է։

Ինչպէս որ երկրիս ներքին ջերմութիւնը բորբոքելով, տեղ տեղ վրայի կեղևը ամանկ վեր կը հռէ՝ ներհակաբար ալ տեղ տեղ տկարանալով վրայի կեղևը վար կը ցածնայ, ինչպէս Կրինլէնտիոյ արևելեան ծովեզրը երթալով ցածնալու վրայ է. Ընտ լեռներուն ալ մէկ քանի ծայրերը ինկնալու վրայ են։

Ցուրն ալ բնութիւն մը ունի որ զբաղը կը մաշէ, որով և ծովուն ալիքները շատ ապառաժ կղզիներ և ծովեզրներ մաշելու վրայ են։

Սոնք բոլորն ալ որչափ որ անդգալապէս կը յառաջանան՝ այնչափ ալ օր օրի երկրագնտիս մակերևոյթին բաժանմանց ձևերը փոխուելու վրայ են։

Պէլ ղայէթի լեռան ծայրը՝ նաւ կապելու օղակ մը կայ։ շատ կարելի է որ Պուրնապաթու երկիրը մինչև ծովեզրը առաջուց ծով եղած ըլլար, և ետքը կեդրո-

նական ջերմութեան անդայտացմանէն բարձրացած ըլլայ։ Այս բանիս համար չատ առասպելներ կը խօսացուին, մանաւանդ Երդի Օմիւռնիոյ համար։ և ինչպէս նաև Բագոս լեռան վրայ ոսարէներ և անթիւ նշաններ և ապացոյցներ կան աս բանիս կարելիութեանը վրայ։

Երկրիս ներքին զանգուածին, միջուկին ինչ նիւթէ ըլլալուն վրայ մեծ վէճ կայ երկրաբանից մէջ և երկմտութիւն։ մենք հոսաեղ երկուքնալ կը դնենք ի տեղեկութիւն ընթերցողաց, թէպէտև առաջինն է հաւանականագոյնը։

Երկրագէտները գիտած են որ ամեն մէկ 25 — 30 մեթր երկրիս ներսը իջնալուս մէկ աստիճան ջերմութիւն կ'աւելնայ ջերմաչափին վրայ, (սակայն աս 25 — 30 մեթրը խորութիւնը կրնայ փոխուիլ երկրիս այլև այլ տեղերուն ունեցած զանազան բարեխառնուեցը պատճառաւ) բայց ընդհանրաբար խօսալով, երկրիս երեսէն քանի որ 25—30 մեթր երկրիս խորը մըտնելով դէպ ի կեդրոնը դիմենք՝ կը գտնենք որ դրսի եղած բարեխառնութենէն մէկ աստիճան աւելի է ան տեղի ջերմութիւնը, և ասանկ շարունակելով որ-

Z 97-2009

7333.17

չափ որ վար իջնանք դէպի կեդրոնը՝ երկրիս ջերմութիւնն ալ կ՚աւելնայ, անանկ որ շատ հանքերու մէջ գործաւորները մերկ կ՚աշխատին։

Հիմակ աս համեմատութեամբ կըգըտնեմք որ եթէ երկրիս երեսէն 3000 մէթր խորը մանենք՝ այն տեղի ջերմուելը պիտի ըլլայ 100 աստիճան այսինքն ջրի եռացման աստիճան։ 20000 մէթր խորութեան մէջ ալ 666 աստիճան որ ըսել է թէ այն խորութեան մէջ ամեն հանք ու մետաղ հալած կը գտնուին. իսկ անկէ ալ խորը ամենակարծր մարմիններն ալ հալած ու կրակ դարձած։ Այս հաշուէն կ՚իմանանք թէ հիմա երկրիս կարծր կեղևը հաղիւ 20000 մէթր թանձրութիւն ունի։

Ասիկա է առաջին և հաւանականագոյն փաստը։

Գ՝անք երկրորդին, որ կըսէ թէ երկրիս կեդրոնը, միջուկը՝ ամենակարծր նիւթից զանգուած մնէ, ըստ որում Կեդրոնահակ ձգողութիւնը միշտ դէպի կեդրոնը աւելի խիտ ու զօրաւոր է քան թէ վրայի մակերևոյթի մասերը, որով և չի կրնար երկրիս ներքին նիւթը հեղուկ ու

ծորելի ըլլալ. և վրայի կեղևը պինդ ամենակարծր նիւթից զանգուած մը (Տես Հատոր Գ. Հասարակաց Թանգարանին):

Երկրագնտիս ներքևը երկու կերպ կազմուԹիւն կայ. Ընկանոն կամ Հրային կարգաւորուԹիւն և Կանոնաւոր կամ Ջրային կարգաւորուԹիւն. ինչպէս և պատկերին մէջ կը տեսնենք.

Երբ խիճ, աւազ, հող ու կաւ ջրով խառնենք ու ետքը Թողտանք՝ կը տեսնենք որ առաջ բնական ձգողուԹեամբ խիճը վար կիջնայ. ետքը՝ աւազը, հողը ու կաւը: Այսանկ ալ երբ անձրևաց ջրերը ու գետերը լեռներէն կը գան իրենց հետ կը բերեն քար, հող, աւազ, և այլն և այլն, և երբ ասոնք՝ ջրերուն յորձանքովը ծովը կիյնան՝ առաջ քարերը վար կ'իջնան, ետքը հողը ու վերջապէս ամեն բան իրենց ծանրուԹեանը համեմատ յատակը կը նստին ու շարք շարք կը կարգին և կը քարանան: Ահա այսպէս ստեղծուած են բոլոր աշխարհիս Կանոնաւոր կարգադրուԹիւնը որուն համար Ջրային ալ կըսուի:

Կեդրոնական հրոյն զօրութենէ աւրուած Կանոնաւոր կարգադրութիւններն ալ Ընկանան կամ Հրային կ'ըսուին։

Ովկիանոսին ունեցած խորութեան ճիշդ չափը չկայ, բայց կը կարծուի որ 5 — 6 մղոն է (ինչպէս և ամենէն բարձր լեռը)։ Եթէ ծովու մը եղերքը շիտ շիտակ և աւազուտ է, և տափարակ կերպիւ ջուր կը մտնէ՝ այն տեղն ծովուն յատակը խոր չըլլար, և աստիճանաբար կը խորանայ։ իսկ թէ որ ծովու մը ջրին երեսէն անմիջապէս վեր դահավէժ ժայռ է՝ այն տեղն ծովը խոր կըլլայ։

Լողացող կղզիներ կան, որոնք կորուած ծառերու, և ճիւղերու կոյտեր են, որոնք հողով թանձրացած ըլլալով ջրին վրայ կը լողան։ շատ հեղ ասանկ կղզեայ վրայ խոտ կը բուսնի, որով և թռչուններ բոյն կը դնեն հոն։ Կրնայ ալ որ մի-ջատներ բնակին ու օձեր գտնուին։ Երբեմն մէկ քանի այսպէս կղզիներ միատեղ կը գան, ու իրարու կը միանան, և մեծ լողացող կղզիներ կը ձևանան, ինչպէս են Բրուսիոյ մէջ Կերրիս լճին և ուրիշներու։

Կը պատոհի ալ՝ որ ըղացող կղզիները աւազներու վրայ խրելով, անշարժ կըղզի ձևանան, ինչպէս են Պոլսենայ և Պրասանելլո լճերուն կղզիները, որոնք Ք. Բ. Բիստոսէ 50 տարի ետքը դեռ շարժուն էին։ Օիսթ — Ֆրիզ լիճը ըղացող կղզիներէ բոլորովին ծածկուեցաւ ու անոնց տակը մնաց։

Ընդերկրական լիճեր ալ կան, ինչպէս Մադդալինեայ քարանձաւին ծայրը եղածը։

Երկրիս տրամագիծը 7912 մղոն է, իսկ բևեռներուն տրամագիծը 7899 մղոն, որ ըսել է թէ հասարակածի տրամագիծէն 13 պակաս։

Աշխարհիս մէջ գտնուած զարմանալի երևոյթներէն մէկն ալ ժայռերու մէջէն ողջ գորտեր գտնուիլն է։

Քանի՛ ինչպէս կրնայ միլիոնաւոր տարի հնութիւն ունեցող ժայռերու մէջէն ողջ կենդանիներ ելլէ։

Այս մոքէ դուրս երևութիս համար ա՞նանկ կըսեն թէ քարը դեռ կակուղ է՞

զած ժամանակը մէջը մեռցած ըլլայ դոր-
տը և այնչափ անթիւ դարերէ ի վեր ան-
ուաղ մնալուն համար ալ իրեն կազմու-
թենէ յառաջ կը գայ կըսեն։

Երկրիս վրայ համաշխարհական ջրհե-
ղեղեղած ըլլալուն երկրաբանական ապա-
ցոյցներ կրնան ըլլալ, ինչուան 1000 խո-
րանարդ մէթր թանձրութեամբ ժայռի
կտորներուն՝ ձորերու մէջ, ծովեզրներու
մօտ և դաշտերու վրայ գտնուիլը մանա-
ւանդ անանկ երկիրներու մէջ որ իրեն
կազմութեանը նմանիր. հարկաւ այսչափ
ծանր զանգուածները ուրիշ եղանակաւ
այնչափ տեղէ չեն կրնար փոխադրուիլ.
բայց եթէ համաշխարհական ջրհեղեղի մը
մէջոցաւ։ Տարբեր կլիմայի մէջ ապրող
կենդանեաց ոսկերոտիքը տարբեր կլիմայի
մէջ գտնուիլն ալ կրնայ այս բանիս կարե-
լիութեանը իբր ապացոյց ծառայել։

Երկրիս բոլոր Լեզուներուն համար
ալ երկրաբանները կըսեն թէ ջրհեղեղի
մը բռնութենէն բացուած են և թէ ա-
ռաջուց գոյ էին։

Ջանաղան ազգեր ալ ջրհեղեղի մը վրա-
յ կը խօսին և Ճիշդ մերինին պէս։

Ընդկաստանցիք՝ Սարպալիֆա անուանով Նոյով մը,

Պրահմանեանք՝ 7ռ Մէնու Իչաճնաչոռ անուամբ Նոյով մը,

Մեքսիկացիք՝ Թէղբի անուանով Նոյով մը։

Եգիպտոսի արևմտեան կողմը եղած անապատին մէջ ծաղկեալ պարտէզներ կը գտնուին, ամեն կերպ ծառերով ու բոյսերով զարդարուած։ Ինչ զարմանալիք որ ահագին անապատին և արեգակային յետին ջերմութեամբ կրակ դարձած աւազներու մէջ ասանկ ծաղկեալ երկիրներ գտնուին։

Ամեն Հրաբուխ և ամեն երկաշարժ երկրիս կեդրոնական հրոյն անգայտացմանէն յառաջ չեն գար, հապա երկրիս տակը եղած թթուատներու ջրոց շոգիանալովը և զանազան կազերու ընդարձակուելովը ալ յառաջ կրնան գալ։ Կան շատ հրաբուխներ որ փոխանակ լերանց գլուխը գտնուելու հարթ դաշտերու մէջ կելլան և աղիջուր կը պօրթկացընեն։

Ի ԼՍԻԵՆ ԷՐԷՄԱՏԱՍԻՐՈՒԹԻՆՆ։

Եդիպտոսի նշանագիր։

Սիպեր, Տիեզեր,

Օշսիր

Սրիրիկ

Լանիսքանորիան համաօր

չրկաշանորիան „

Ի ՆԱԻԻՆ ԸՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵՆԻ

Եգիպտական նշանագիրք
Սիպէլ, Տիեղէր
Զաղէլ
Սաղինին
Տիգրանո-հի
Գանկաբանո-ին համա-օպ
Եշիրաբանո-ին „
Զգողաբանո-ին „
Վիմաբանո-ին „
Եղեկիրաբանո-ին և
Կալվանաբանո-ին „
Կենդանաբանո-ին „
Բոսաբանո-ին „
Ջերմաբանո-ին „
Էոդլաբանո-ին „
Ապաղաբանո-ին „
Լոսաբանո-ին „
Անգնիսաբանո-ին „
Մեսմերաբանո-ին „
Նանաբո-ջո-ին „
Սփոլերաբանո-ին „
Զայնաբանո-ին „